Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու Կարապետ Դոլինյանի անվան թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1.ՀՀ քաղաքացիությունը,

2.ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,

3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,

4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 9-ից մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Ալավերդու Կարապետ Դոլինյանի անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. դեկտեմբերի 13-ին՝ ժամը 15:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Կարապետ Դոլինյանի անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Ալավերդի համայնք, թ. Ակներ, փողոց 1, շենք 8: Տեղեկությունների համար զանգահարել 043-23-69-19, 099-46-74-53 հեռախոսահամարներով, էլ. հասցե՝ alaverdi11@schools.am: